



Կալիֆոռնիայի Պաշտպանության և Փաստաբանության համակարգ

Խտրականության վերաբերյալ ամփոփաթերթ Չասարակական տրանսպորտ

Սեպտեմբեր 2019 թ., հրատ. #7144.10

Չաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի (ADA) II-րդ գլուխն արգելում է հասարակական տրանսպորտի ծառայությունների կողմից հաշմանդամությամբ պայմանավորված անձանց խտրականությունը: Չասարակական տրանսպորտի ծառայությունները ներառում են հաստատուն երթուղային համակարգեր, ինչպիսիք են քաղաքային ավտոբուսները և երկաթգծային փոխադրամիջոցները: Չասարակական տրանսպորտային գործակալությունները չեն կարող մերժել հաշմանդամություն ունեցող անձանց փոխադրումը, և պետք է նրանց համար տրամադրեն խելամիտ հարմարեցումներ, (որոնք նաև կոչվում են «խելամիտ ձևափոխություններ») որոնց կարիքը նրանք ունեն այդ ծառայություններից օգտվելիս:

ADA Title II – Չասարակական տրանսպորտի ծառայությունները

Տրանսպորտի վարչությունը կարգավորում է ADA-ի տրանսպորտին առնչվող կանոնները: Ստորև ներկայացված է ADA-ի պահանջների ցանկը, ոչ ամբողջական, որոնք պետք է բավարարի հասարակական տրանսպորտային գործակալությունը: ADA-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Ուղևորների փոխադրմամբ զբաղվող դաշնային վարչակազմի կայքէջը՝ <https://www.transit.dot.gov/regulations-and-guidance/civil-rights-ada/americans-disabilities-act>

Չաստատուն երթուղային համակարգերի համար ավտոբուսներին և վագոններին ներկայացվող պահանջները՝

Կանգառի մասին հայտարարություններ.

- ավտոբուսի օպերատորը պետք է հայտարարի փոխադրման կանգառների հատվածները, հիմնական խաչմերուկները, նպատակակետերը և այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ են տեսողական և այլ հաշմանդամություն ունեցող անձանց հասկանալու նրանց գտնվելու վայրը:
- Ավտոբուսի օպերատորը պետք է հայտարարի ցանկացած կանգառի մասին, որը խնդրում է հաշմանդամություն ունեցող ուղևորը:

Փոխադրամիջոցների վերաբերյալ նպատակակետի մասին տեղեկություններ

- Փոխադրամիջոցները պետք է տրամադրեն նպատակակետի և երթուղու մասին տեղեկություններ փոխադրամիջոցի առաջնամասի և իջնելու հատվածում: Սա հատկապես կարևոր է, երբ տարբեր երթուղիների առաջարկող փոխադրամիջոցներն օգտագործում են նույն կանգառը:
- Նպատակակետի և երթուղու մասին տեղեկությունները պետք է հայտարարվեն՝ ապահովելու, որ տեսողական կամ այլ հաշմանդամություն ունեցող անձինք իմանան, թե որ փոխադրամիջոցը պետք է նստեն:

Վերելակներ և թերահարթակներ.

- Փոխադրամիջոցները պետք է ունենան հարմարանք, ինչպես օրինակ վերելակ կամ թերահարթակ՝ թույլ տալու անվասայլակ օգտագործող ուղևորին օգտվել փոխադրամիջոցից: Վերելակները պետք է տեղավորեն նվազագույնը 600 ֆուտ և պետք է կարողանան տեղավորել 30-48 դյույմ ունեցող անվասայլակ:
- Անվասայլակներ, քայլելու հարմարանք, հենակներ, ձեռնափայտեր, ֆիքսատորներ օգտագործող ուղևորները, ովքեր այլապես չեն կարող օգտվել աստիճաններից պետք է թույլատրվեն օգտագործել վերելակ:

Դրամարկդի ապարատներ.

- Դրամարկղի ապարատները պետք է տեղադրվեն այնպես, որ նրանք չխանգարեն ավտոբուսի մեջ ուղևորների տեղաշարժը

Ճաղաշարքեր.

- Փոխադրամիջոցում գտնվող ճաղաշարքերը պետք է հասանելի լինեն փոխադրամիջոց մտնող դրսի մարդկանց համար: Ըաղաշարքը պետք է հասանելի լինի փոխադրամիջոց նստելու ողջ ընթացքում, որը ներառում է նաև ուղևորի դրամարկղի ապարատում ուղեվարձի վճարումը:

Կանգառի պահանջ.

- փոխադրամիջոցի քաշովի պարանները կամ կոճակները պետք է հասանելի լինեն անվասայլակով անձանց համար և չպետք է պահանջեն «ամուր կառչում, ձգում կամ դաստակի թեքում»:

Ծառայողական կենդանիներ.

- հասարակական տրանսպորտում հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն իրենց հետ ունենալ ծառայողական կենդանիներ, սակայն ոչ այնպիսի կենդանիներ, որոնք զուտ զգացմունքային աջակցության համար են: Ծառայողական կենդանիները շներն են, որոնք վարժեցված են կատարելու հաշմանդամությանն առնչվող աշխատանքներ կամ առաջադրանքներ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Արագընթաց երկաթգծային երթուղային համակարգերի պահանջներ

- Յուրաքանչյուր արագընթաց գնացք պետք է ունենա առնվազն մեկ ավտոմեքենա, որը հասանելի է և կարող է օգտագործվել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից, ներառյալ անվասայլակներով անձինք:
- Ըաղաշարքերը պետք է տրամադրվեն աջակցելու փոխադրամիջոցը նստելիս և իջնելիս՝ նրանց շարժունակությունը, նստելու ու կանգնելու հնարավորությունը ապահովելու նպատակով:

Հասարակական տրանսպորտային գործակալությունից խելամիտ ձևափոխության պահանջում

Յուրաքանչյուր հասարակական տրանսպորտի փոխադրմամբ զբաղվող կառույցից պահանջվում է անցնել հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ խելամիտ ձևափոխությունների գործընթաց՝ համաձայն գործակալության քաղաքականությունների և գործելակերպի, նպատակ ունենալով դարձնել սպասարկումը պիտանի և՛ հաշմանդամություն ունեցող, և՛ չունեցող անձանց համար: Ձևափոխման պահանջի գործընթացը պետք է նկարագրել նույն մեթոդով ինչը փոխադրող ընկերությունն է օգտագործում՝ ընդհանուր տրանսպորտին վերաբերող իր գործելակերպը և քաղաքականությունները տեղեկացնելու նպատակով: Օրինակ՝ եթե փոխադրող ընկերությունն իր կայքէջի միջոցով է տեղեկացնում իր գործելակերպի և քաղաքականությունների մասին, ապա ձևափոխությունների պահանջի գործընթացը նաև պետք է ներառված լինի կայքէջում: Ի լրումն, ձևափոխման պահանջի գործընթացը պետք է նաև հասանելի լինի հաշմանդամություն ունեցող անձանց:

Երբ իրագործելի է, շատ լավ կլինի պահանջել ձևափոխությունների հարմարեցումները նախապես՝ օգտագործելով սույն ամփոփաթերթի վերջնամասում առկա հարցման նմուշը և օժանդակ նամակները: Եթե խելամիտ հարմարեցումների պահանջի նախապես կատարումը իրագործելի չէ, ապա կարող եք Ձեզ անհրաժեշտ հարմարեցումների համար խնդրել փոխադրամիջոցի օպերատորին:

Հաշմանդամություն ունեցող անձի կողմից կատարած խելամիտ հարմարեցումների պահանջը կարող է մերժվել ՄԻԱՅՆ հետևյալ պատճառներով.

- Պահանջը՝ թույլ տալու անձին օգտվել հասարակական տրանսպորտային համակարգից, անհրաժեշտ չէ.
- պահանջի տրամադրումը հիմնովին կփոխի ծառայությունների, ծրագրերի կամ գործողությունների բնույթը Կամ
- պահանջի տրամադրումը մյուսների առողջության կամ անվտանգության սպառնալիք կհանդիսանա:

Հասարակական տրանսպորտային գործակալությունների համար բողոքարկման գործընթաց.

քաղաքացիական իրավունքների հարցերով զբաղվող դաշնային փոխադրման գրասենյակը (FTA, Federal Transit Administration) այն

գործակալությունն է, որը ստանում է տեղական փոխադրող գործակալությունների ADA-ի խախտումների մասին բողոքները: Եթե կարծում եք, որ ADA-ի խախտում է տեղի ունեցել, քաղաքացիական իրավունքների հարցերով զբաղվող FTA գրասենյակը խորհուրդ է տալիս, որ բողոքն անմիջապես ներկայացնեք տեղական հասարակական տրանսպորտային գործակալությանը՝ տեղական գործակալությանը հնարավորություն տալով շտկել կամ արձագանքել Ձեր մտահոգությունը (ները), նախքան FTA-ին բողոք ներկայացնելը:

Տրանսպորտի վարչությունը (DOT, Department of Transportation) պահանջում է, որ յուրաքանչյուր տրանսպորտային գործակալություն ունենա բողոքարկման գործընթաց: Կարող եք տեղական մակարդակով կատարել Ձեր բողոքարկման գործընթացը՝ անմիջապես կապ հաստատելով նրանց հետ կամ այցելելով նրանց կայքէջ, եթե առկա է:

Եթե տեղական գործակալությունը չի արձագանքում Ձեր մտահոգությանը, ապա կարող եք որոշել բողոքը ներկայացնել քաղաքացիական հարցերով զբաղվող FTA-ի գրասենյակին՝ լրացնելով ձևաթուղթը և ուղարկելով այն մեր փոստին.

Բողոքարկման ձևաթուղթը կարող եք գտնել այս հղմամբ՝
https://www.transit.dot.gov/sites/fta.dot.gov/files/docs/Consolidated_Civil_Rights_Complaint_Form.pdf

Բացի այս ձևաթղթից Ձեր ուղարկվելիք բողոքը պետք է պարունակի հետևյալը՝

- ձեր վկայակոչումների և օժանդակ թղթաբանության ամփոփագիրը
- բավականաչափ մանրամասներ, որոնք կօգնեն հետաքննիչին հասկանալ, թե ինչու եք կարծում, որ հասարակական տրանսպորտի մատակարարը խախտել է Ձեր իրավունքները՝ նշելով այնպիսի մանրամասներ, ինչպես օրինակ միջադեպերի ամսաթվերը և ժամերը:
- Փոխադրման մատակարարից ստացված որևէ առնչվող նամակագրություն:

Ուղարկեք լրացված ձևաթուղթը և կից փաստաթղթերը ստորև հասցեին՝

Federal Transit Administration

Office of Civil Rights

Attention: Complaint Team East Building, 5th Floor – TCR

1200 New Jersey Avenue, SE

Washington, DC 20590

- Դուք պետք է FTA-ի բողոքը ներկայացնեք խտրականության միջադեպից հետո 180 օրվա ընթացքում:

Եթե բողոք ներկայացնելու հետ կապված հարցեր ունեք, կարող եք կապվել քաղաքացիական իրավունքների հարցերով զբաղվող FTA-ի գրասենյակ 1-888-446-4511 հեռախոսահամարով կամ էլ նամակ ուղարկել FTA.ADAAssistance@dot.gov հասցեին (հղումը նամակն ուղարկում է)

Պատշաճ հարմարություններ խնդրելու նամակի նմուշ

[Ամսաթիվ]

Հարգելի [հասարակական տրանսպորտի մատակարար],

Ես գրում եմ Ձեզ՝ պատշաճ հարմարեցումներ խնդրելու իմ հաշմանդամության/հաշմանդամությունների համար:

Ես [կցանկանայի լինել/ հանդիսանում եմ] [փոխադրող ընկերության] հաճախորդ: Իմ հաշմանդամության պատճառով ես հետևյալ հարմարեցումների կարիքն ունեմ՝ [սշել հարմարեցումները]:

Իմ [բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/աշխատանքային թերապևտը/այլ անձ (նկարագրել)] համարում է, որ այս հարմարեցումները/փոփոխություններն անհրաժեշտ են իմ հաշմանդամության պատճառով: Խնդրում եմ նայել կից նամակի ձևաթուղթը [բժշկի կամ մասնագետի անունը]-ից:

Դաշնային և նահանգային օրենքները պահանջում են, որ ձեռներեցները պատշաճ կերպով հարմարեցումներ տրամադրեն այն ուսանողներին և դիմորդներին, ովքեր հաշմանդամություն ունեն: Խնդրում եմ այս խնդրանքին պատասխանել մինչև [ամսաթիվ]: Խնդրում եմ դիմել ինձ [Ձեր հեռախոսահամարը և/կամ էլ.փոստի հասցեն] միջոցով, եթե Դուք որևէ հարց ունեք:

Շնորհակալություն: Հարգանքով՝

[Ձեր անունը]

[Ձեր հասցեն]

Աջակցող նամակի նմուշ

[Ամսաթիվ]

Չարգելի [հասարակական տրանսպորտի մատակարար],

ես [անուն]-ի [բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/աշխատանքային թերապևտն] եմ և ծանոթ եմ նրա առողջական խնդրին: [Նա] հաշմանդամություն ունի, ինչը որոշակի ֆունկցիոնալ սահմանափակումներ է ստեղծում: Այս սահմանափակումները ներառում են [նշեք ֆունկցիոնալ սահմանափակումները, որոնք պահանջում են հայցված հարմարեցումները]:

[Հայցվող հարմարեցումը] անհրաժեշտ է [անուն]-ի համար՝ օգտվելու [հասարակական տրանսպորտի անուն]-ից: [Նկարագրեք, թե հարմարեցումն ինչպես կօգնի կամ կաջակցի անհատին]:

Շնորհակալություն այս պատշաճ հարմարեցումը [անուն]-ին տրամադրելու համար:

Չարգանքով՝

[Անուն և պաշտոն]